«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հայկական հարցի սկզբնավորման ու բովանդակության խնդիրը Լեոյի աշխատություններում

ԱՌԱՐԿԱ՝ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարինե Սարգսյան

ՄԱՐԶ՝ Արագածոտնի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Գեղաձորի Արտակ Օհանյան անվան միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Բովանդակություն……..……2

Ներածություն……3

Հայկական հարցի սկզբնավորման ու բովանդակության խնդիրը Լեոյի աշխատություններում…..……6

Եզրակացություն……20

Գրականության ցանկ……..22

Ներածություն

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին տասնամյակի հայ պատմագիտության նշանավոր և կարկառուն ներկայացուցիչն է պատմաբան, գրող, գրականագետ, հրապարակախոս, ՀԽՍՀ գիտությունների և արվեստի ինստիտուտի անդամ, պրոֆեսոր Լեոն (իսկական անուն-ազգանունը՝ Առաքել Գևորգի Բաբախանյանը, 1860-1932): Վերջինս իր կեղծանունը յուրացրել է դեռևս 18 տարեկանում՝ ոգեշնչվելով գերմանացի գրող Ֆրիդրիխ Շպիլհագենի նշանավոր «Մեկը դաշտում զինվոր չէ» վեպի հերոս Լեոյի անունից:

Ծնվել է 1860 թվականի ապրիլի 26-ին Արցախի Քարին տակ գյուղում: 1878 թվականին ավարտել է Շուշիի քաղաքային դպրոցը: Լեոյի ընտանիքը բազմանդամ էր, այդունհանդերձ, սոցիալական ծանր պայմանների պատճառով, նա հնարավորություն չի ունեցել բարձրագույն կրթություն ստանալու և 1895-1906 թթ. աշխատակցել է «Մշակ» թերթին: Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա տեղափոխվել Թիֆլիս: 1924թ. Հրավիրվել է Հայաստան, և աշխատանքի է անցել ԵՊՀ-ում: 1925թ. Ստացել է պրոֆեսորի կոչում:

Մեծ է Լեոյի վաստակը հայ հասարակական մտքի, հայ գրականության ու մշակույթի պատմության ուսումնասիրման բնագավառում: Մինչև պատմագիտական իր աշխատությունները, Լեոն իր գրական գործունեության առաջին տասնամյակում զբաղվել է գրական-հրապարակախոսական աշխատանքներով, գրել է վեպեր, պատմվածքներ, վիպակներ: Առավել արժեքավոր են վերջինիս պատմագիտական աշխատությունները: Դրանց մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմությանը և հայկական հարցին նվիրված աշխատությունները:

Հայկական հարցը եղել և մինչև օրս մնում է հայ ժողովրդի ամենաշատ ուսումնասիրված , բայց միևնույն ժամանակ թերի և բաց կողմեր ունեցող հարցերից մեկը: Սույն հետազոտական աշխատանքում մենք ներկայացնում ենք հայկական հարցի նկարագրությունը ըստ Լեոյի՝ հինգերորդ դարից մինչև 1914թ:

Աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ հայկական հարցը շարունակում է մնալ շատ մասնագետների ուշադրության կենտրոնում: Թեմայի ընտրության հիմնական

պատճառն այն է, որ Լեոյի հակասական հայացքներն ու տեսակետները հայկական հարցի և հայ ազատագրական պայքարի հետ կապված միշտ քննարկման և վեճերի առիթ են դառնում:

Աշխատանքի նպատակն է վեր հանել Լեոյի աշխատություններում հայկական հարցի սկզբնավորման և բովանդակության խնդիրը և ցույց տալ, թե ինչպես են աշխատությունները գրելու պատմական ժամանակաշրջանները ազդել Լեոյի հայացքների վրա: Համակողմանի ներկայացնել և վերլուծել Լեոյի հայացքների փոփոխությունների առանցքային կետերը:

Նշված նպատակը իրականացնելու համար փորձել ենք լուծել հետևյալ խնդիրները՝ թե ի՞նչ տեսակետներ ունի Լեոն հայկական հարցի սկզբնավորման և բովանդակության վերաբերյալ, որքանով է ժամանակաշրջանը ազդել նրա տեսակետների փոփոխման վրա, և թե իր տեսակետներից, որոնք են համապատասխանում ներկայումս լայն տարածում ստացած տեսակետներին:

Աշխատանքը կատարելիս օգտվել ենք Լեոյի թերևս ամենանշակալի և հայկական հարցի հետ կապված առավել առանցքային նշանակություն ունեցող աշխատություններից: Դրանք են «Հայկական հարցը»[1], «Հայկական հարցի վավերագրերը»[2], «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը>> հ.Ա[3] և հ.Բ[4], «Անցյալից»[5], «Գրիգոր Արծրունի»[6] և «Քրիստափոր Միքայելյանի հիշատակին»[7] աշխատությունները: Աշխատանքը կատարելիս օգտվել ենք Նորայր Սարուխանյանի «Խորհրդային պատմագիտությունը 1920-30-ական թթ.» աշխատությունից[8]:

«Հայոց հարցը» աշխատությունը արժեքավոր է նրանով, որ Լեոն այստեղ ներկայացնում է արևմտահայերի ծանր վիճակը և հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական պայքարը: Այս նույն հիմնախնդիրները ավելի խորությամբ հեղինակը ներկայացնում է «Հայկական հարցի վավերագրերը» աշխատությունում:

---

[1] Լեո, Հայկական հարց, հ. Ա, Թիֆլիս, 1906:
[2] Լեո, Հայկական հարցի վավերագրերը, (վերահրատակություն), Երևան, 2014:
[3] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ.Ա, Փարիզ, 1934:
[4] Լեո,Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ, 1936:
[5] Լեո, Անցյալից, (վերահրատարակություն), Երևան, 2009:
[6] Լեո, Գրիգոր Արծրունի, հ. Բ, Թիֆլիս, 1903:
[7] Լեո, Քրիստափոր Միքայելյանի հիշատակին, Կ. Պոլիս, 1909:
[8] Ն., Սարուխանյան Խորհրդահայ պատմագիտությունը 1920-30-ական թթ. , Երևան, 2016:

Երրորդ առանցքային աշխատությունը «Անցյալից»-ն է, որ սակայն հարկ է նշել, որ գրվել է հուշագրության ձևով, և հաշվի առնելով, թե ինչպիսի աղետալի իրադարձություններից հետո է շարադրվել այս գործը, պետք է հասկանալ և ըմբռնումով մոտենալ այս աշխատանքում Լեոյի՝ պատմական դեմքերի հանդեպ ունեցած քննադատական հայացքներին և հակասական ու իրարմերժ մոտեցումներին:

Լեոյի և նրա աշխատությունների մասին կարևոր և արժանահավատ աշխատությունը, որից օգտվել ենք, Նորայր Սարուխանյանի վերոնշյալ գործն է, որտեղ հեղինակը անաչառ կերպով ներկայացնում է Լեոյի պատմագիտական ժառանգության առավելությունները և թերությունները, և առանձնացնում է նրա իրար հակասող կարծիքները:

Հայկական հարցի սկզբնավորման ու բովանդակության խնդիրը Լեոյի աշխատություններում

Հայկական հարցը իր միջազգայնացման ժամանակներից մինչ օրս համարվում է հայագետների և պատմաբանների կողմից ամենաքննարկվող և վիճելի հարցերից մեկը: Հայկական հարցի սկզբնավորումը տարբեր հեղինակներ տարբեր ժամանակաշրջաններով են թվագրում, ինչպես նաև հակասական մոտեցումներ ունեն Հայկական հարցի բովանդակության և լուծման ուղիների հետ կապված:

Հայկական հարցի ուսումնասիրման գործում իր անգնահատելի ավանդն ունի խոշոր հայագետ, պատմաբան, գրող, հրապարակախոս Լեոն (Առաքել Գևորգի Բաբախանյանը): Լեոն թողել է մեծ ու արժեքավոր գրական ժառանգություն, որում մեծ ուշադրություն է դարձրել հայոց պատմության հանգուցային շատ հարցերի, որոնք լուսաբանել է նորովի: Լեոյի պատմագիտական ու գրական ծավալուն ժառանգության մեջ նշանակալի տեղ են գրավում հայկական հարցին, հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի պատմությանը նվիրված աշխատությունները:

Հայկական հարցի սկզբնավորման հետ կապված Լեոն գրում է, որ հայկական հարցը նույնքան հին է, որքան ինքը՝ հայ ազգը[9]: Վերջինիս համոզմամբ հայկական հարցը հայ ժողովրդի ազգային գոյության հարցն է: Հայկական հարցը ուսումնասիրելիս Լեոն այն բաժանում է մի քանի շրջանների. սկսում է 5-րդ դարի ազատագրական պայքարից՝ հասցնելով մինչև 20-րդ դարի սկիզբ:

Ազատագրական պայքարի առաջին խոշոր արտահայտությունը 5-րդ դարի կրոնական պատերազմներն են: Հենց այս ժամանակ էլ բնորոշվում է հայոց հարցի ամբողջ կերպարանքը, որը իր էությամբ այսօր էլ անփոփոխ է: Հայաստանը ապստամբում է Պարսկաստանի դեմ՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, քանի որ Պարսկաստանը լոկ հպատակություն չէր ուզում, այլ կատարյալ ստրկություն: Հայերը ընդդիմացան, ապստամբեցին: Նրանք ուզում էին իրավատեր հպատակ լինել և ոչ թե ստրուկ. գաղափարականը, մտավորը, մշակութայինը նրանք բարձր դասեցին ֆիզիկական կյանքից և մի խենթ ինքնամոռացությամբ նետվեցին պատերազմի մեջ մի վիթխարի պետության դեմ, որ շատ հեշտությամբ պետք է ճնշեր այդ ապստամբությունը[10]:

---

[9] Լեո , Հայկական հարցի վավերագրերը, (վերահրատարակություն), էջ 24:
[10] Լեո, Հայոց հարցը, հ.Ա, էջ 8-9:

Եղիշեի մոտ վարդանանց պատերազմի գլխավոր ճակատամարտի՝ Ավարայրի ելքը հայերի համար նշանավորվում է որպես «բարոյական» հաղթանակ: Սակայն, Ավարայրի պարտությունը ներկայացնելով որպես բարոյական հաղթանակ, ինքնին խեղաթյուրվում է պատմությունը և արդյունքում մեծանում են ստով և կեղծիքով սնված սերունդներ, որոնց մտածողությունը խեղված էր՝ ճշմարտությունները չտեսնելու աստիճան, ում համար պարտությունը նույնն էր, ինչ հաղթանակը, քծնելը նույնն էր, ինչ դիվանագիտություն անելը, և ի վերջո՝ ում արժեքները դասդասված չէին և չունեին կշռելու միասնական չափանիշ:

Վարդանանց ապստաբությունը խեղդվեց արյան վտակների մեջ: Բայց սրանից տասնյակ տարիներ անց հայերը նորից իրենց արդար դատի պահանջն են առաջ բերում: Այս անգամ ապստամբության հոգին և առաջնորդը Վահան Մամիկոնյանն էր: Պարսկաստանը խոցոտելու համար նա սուր վերցրեց ոչ թե այն ժամանակ, երբ շահնշահների բռնապետությունը խաղաղ ու անվրդով էր, իր ամբողջ ահարկու ուժը մի տեղ հավաքած,այլ այն ժամանակ, երբ հեփթաղները ջարդեցին պարսիկներին և շահնշահը սպանվեց պատերազմում: Վահան Մամիկոնյանը հաղթական էր, նա կարող էր կատարել քաղաքական անկախության ծրագիր, բայց նա այդպես չարեց: Հայտարարելով պարսից կառավարությանը՝ թե հայը շարունակում է մնալ Իրանի հպատակ, նա երկրի խաղաղեցման միակ միջոցը համարում էր կրոնի ազատությունը, պարսկական՝ դավաճաններին հովանավորելու քաղաքականության վերացումը և հայ ժողովրդի անմիջական հարաբերություններ ունենալը պարսից շահնշահի հետ[11]:

Այս ամենի շարունակություն կարող ենք համարել Արաբական նվաճողական արշավանքների ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները, երբ պետք էր միավորվել և քրիստոնեությունը «պաշտպանել» իսլամից: Բայց, հակառակ սրան, Բյուզանիդայի Մորիկ կայսրը փորձում է զորքի ուժով հարկադրել հայերին ընդունել քաղկեդոնականություն և ի պատասխան սրա՝ հայերը, Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ, անցնում են արաբների կողմը՝ գերադասելով դառնալ մահմեդականներին հպատակ, քան ընդունել քաղկեդոնականություն:

Այս փաստերից ելնելով՝ Լեոն հանգում է այն կարծիքին, որ հայերը առհասարակ ոչնչի ձգտում չունեին, կամ շատ քիչ, շատ աննշան ձգտում ունեին դեպի քաղաքական կատարյալ անկախություն: Հարևան մեծ պետությունների անխորտակելի ուժը, հայ ժողովրդի թվական

[11] Վերը նշված աշխ., էջ 11-12:

նվազությունը, երկրի աշխարհագրական դիրքը, ներքին վարչական սիստեմը, - սրանք այնպիսի խոչընդոտներ չէին, որ կարողանար արհամարհել մի ազգ: Բայց միևնույն ժամանակ այդ հզոր հանգամանքները չէին արգելում, որ հայ ազգը արյունով և սրով բողոքեր տիրողների անսահման կամայականությունների դեմ: Հավատարիմ հպատակությունից չէր փախչում նա, այլ պահանջում էր իրավունք, արդարություն՝ իր կյանքը ապահովելու համար[12]:

Հայաստանում արաբական տիրապետությունը տևում է 170 տարի, մինչև Բագրատունյաց թագավորության ստեղծումը: Այս տարիներին ևս տեղի են ունենում մի շարք ապստամբություններ, որոնք, սակայն, հաջողվում է ճնշել արաբների կողմից: Հայերին սեփական հայրենիքում պարուրել էր հուսահատությունը, բայց դա չէր նվազեցնում հայ ժողովրդի ազատագրական տենչը: Այդ ժողովուրդը,- նշում էր Լեոն, - այնքան քիչ բանով էր բավականանում իր կյանքը կարգավորելու բարելավելու համար, և դարձյալ այդ քիչն էլ չէր ստանում… Բայց նա զարմանալի տոկունությամբ հույս էր պահում իր մեջ և շարունակում էր բողոքել, պահանջել և տանջվել[13]:

9-րդ դարի կեսերին նորից արաբական զորքերը Բուղայի առաջնորդությամբ փորձեցին ճնշել Հայաստանում ծագած ապստամբությունը: Սակայն այս անգամ Աշոտ Բագրատունին ոչ թե սրի ուժով, այլ ճարպիկ ու նուրբ քաղաքագիտությամբ մի նոր շրջան բաց արեց մեր պատմության մեջ: Բայց այս համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանը(Բագևատունիների թագավորության ժամանակաշրջան) շատ երկար չի տևում: Երբ արաբական պետությունը բոլորովին թուլացավ և կորցրեց իր հեղինակությունը, հայկական թագավորության և մանր իշխանությունների մահը անխուսափելի դարձավ:

11-րդ դարը համաշխարհային պատմության մեջ հռչակված է երկու մեծ շարժումներով: Արևելքից դեպի Արևմուտք շարժվում են սելջուկ թուրքերը՝ նվաճելով Պարսկաստանը, Հայաստանը, Սիրիան և Պաղեստինը: Դա մահմեդականության հզոր առաջընթացությունն էր, որի ժամանակ խորտակվեցին հայկական անկախությունները Վասպուրականում, Շիրակում և Վանանդում: Այդ ահեղ շարժումից դրդված՝ ոտքի է կանգնում Արևմտյան Եվրոպան, իբրև

[12] Նույն տեղում, էջ 15:
[13] Նույն տեղում, էջ 24:

քրիստոնեա աշխարհ, որ շարժվում է դեպի արևելք, սելջուկյան արշավանքի դեմ քրիստոնեության գործը ազատելու համար[14]:

Կորցնելով ազգային անկախությունը և ընկնելով սելջուկների տիրապետության տակ, հայերը չկորցրին իրենց հույսը, որ կրկին կունենան անկախ պետականություն: Հասկանալով, որ նույնիսկ հզոր Բյուզանդիան ահեղ հարվածներ է ստանում սելջուկներից, հայերը հասկացան, որ պետք է հույսը դնել քրիստոնեա Արևմուտքի աջակցության վրա, քանի որ սեփական ուժերով հնարավոր չէր պայքարել սելջուկների դեմ:

Լեոն իր աշխատության մեջ հիշատակում է հայ ազատագրական լեգենդը, որը վերաբերում էր 4-րդ դարի կաթողիկոս Ներսես Մեծին, որը դեռ իր ապրած ժամանակաշրջանում գուշակել էր, որ հայկական պետականությունը կործանվելու էր, Հայաստանում հաստատվելու էր օտարների դաժան տիրապետությունը:Այստեղ հիշատակվում էր, որ Հայաստանը կարող էր ազատագրվել միայն քրիստոնեա Եվրոպայի օգնությամբ՝ երկար տարիներ անց: «Արևմուտքից պիտի գան քաջարի հռովմայեցիները կամ ֆրանկները, որոնք, պիտի ազատեն Երուսաղեմն ու վերականգնեն հայկական անկախությունը, -գրում է Լեոն,- ապա ավելացնում,որ հայ ժողովուրդը սխալված չէր իր ակնկալության մեջ, քանզի Խաչակիրների օգնությամբ հայերը վերականգնեցին իրենց կորցրած անկախությունը, եթե ոչ բուն Հայաստանում, գոնե Կիլիկիայում, Միջերկրական ծովի ափին»[15]:

Հարկ է նշել, որ այդ անկախությունն էլ վերջիվերջո խաթարվեց, և սելջուկներին հաջորդեցին ոչ պակաս բիրտ մոնղոլներն ու Չինգիզ խանը, սակայն հայերը ունենալով շատ կորուստներ, հույսը չէին կորցնում և սպասում էին քրիստոնեա Եվրոպային: Բայց 1453 թվականին օսմանյան թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավումը ցնցեց ողջ Արևելքն ու Արևմուտքը: Հայերը սրանով բախտակից են դառնում սլավոններին և հույներին, և նրանց մահմեդական լծից ազատագրվելու եղանակը նույնն է լինում: Ինչպես նրանք այնպես էլ հայերը դիմում են Եվրոպայի օգնությանը թուրքական լծից ազատվելու համար:

17-րդ դարում Ֆրանսիայի Լյուդովկոս 14-րդ կայսրը ծրագրել էր Թուրքիան նվաճելու և Արևելքը ազատագրելու հզոր ծրագիր: Ծրագիրը չիրագործվեց, սակայն պետք է նշել, որ սա նպաստեց, որ Բալկանյան թերակղզու ժողովուրդների, ինչպես նաև հայերի մոտ սկսեցին ծնունդ առնել ազատագրական պայքար մղելու մտայնությունները: Հայաստանում այդ շարժման գլուխ

[14] Լեո, Հայկական հարցի վավերագրերը,(վերահրատարակություն), էջ 24:
[15] Նույն տեղում, էջ 25:

կանգնած էր Իսրայել Օրին և Հակոբ կաթողիկոսը: Հայերը պատգամավորություն են ուղարկում Եվրոպա հայությանը օրհասական վիճակից հանելու խնդրանքով: Իսրայել Օրին վերադառնում է, իր հետ բերելով ազատագրման ծրագիր, որը նման էր Բալկանյան ժողովուրդների ազատագրական ծրագրերին:

Լեոն նշում է, որ «Օրիի ծրագիրը վերաբերում էր Հայաստանի այն մասին միայն, որ գտնվում էր Պարսից տիրապետության տակ: Հայոց հարցի այս մասնակի լուծումը պետք էր ընդունել իբրև միակ հնարավորը այն ժամանակվա պայմանների մեջ: Բայց թուրքահայերը անմասն չէին մնում ազատագրական շարժումից, և հավաքագրում էին զինվորական ուժ պարսկահայերին օգնելու համար»[16]:

Օրիի ծրագիրը օդում չմնաց: Կատարվեց ծրագրի այն մասը, որտեղ խոսվում էր անկախության մասին: Մասնավորապես Դավիթ Բեկը Սյունիքում ստեղծում է կատարյալ անկախություն՝ նույն իսկ դրամ հատելու իրավունքով[17]: Սակայն Պարսկաստանի հզորացմամբ այս ազատագրական շարժումները մոռացվեցին:

18-րդ դարի երկրորդ կեսին ևս սկսեց հայության շրջանում արծարծվել հայրենիքի ազատագրության հարցը, որի գլուխ կանգնած էր Հովսեփ Էմինը: Նա հասկանալով որ Ռուսաստանը չի օժանդակելու իրեն, փնտրում էր այլ ճանապարհ: Այս անգամ այդ պետությունը կարող էր լինել Վրաստանը՝ Հերակլ թագավորի գլխավորությամբ: Այս ուղղությամբ Հերակլի հետ Էմինը Թիֆլիսում բանակցություններ է վարում[18]:

Հովսեփ Էմինի ծրագրի դեմ է արտահայտվում Էջմիածնի կաթողիկոս Սիմոն Երևանցին: Էմինը վերադարձավ Հնդկաստան, սակայն իր ծրագիրը չարհամարհվեց և հետաքրքրություն առաջացրեց հայ վաճառական ընտանիք Շահամիրյանների շրջանում: Շահամիրյանների ջանքերով և իրենց անձնական տպարանում լույս են տեսնում երկու շատ կարևոր գրքեր, դրանք Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» և Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» գրքերն են:

Ըստ Լեոյի Բաղրամյանը «Նոր տետրակ»-ում ապացուցում էր, որ հայ ազգը ինքն է իր դժբախտությունների պատճառը, և ամեն ինչ իր ձեռքում է, միայն պետք է այն գործի գցել: Իսկ

[16] Նույն տեղում, էջ 28:
[17] Նույն տեղում, էջ 28:
[18] Նույն տեղում, էջ 29

«Որոգայթ Փառաց»-ում ասվում էր, թե ինչ տեսակ կազմակերպություն պետք է ստանար ազատված Հայաստանը: «Պետական կազմակերպությունը, ըստ <<Որոգայթ Փառաց>>-ի,- նշում է Լեոն,- խիստ ազգայնական գույն ունի. խղճի և անձնավորության կատարյալ ազատություն է, բայց յուրաքանչյուր մարդ, որ ապրում է Հայաստանում, պիտի իրեն պատիվ համարի հայ կոչվելը, և պիտի սովորի հայերեն»[19]: Այս կանոնադրությունը բորբոքեց Սիմոն Երևանցի կաթողիկոսի բարկությունը, բայց դրա հետ մեկտեղ Լեոյի բնորոշմամբ այն վերին աստիճանի հետաքրքրական էր, իբրև հայ մարդկանց իդեալ, իբրև գաղափար՝ հայրենի երկիրը ազատելու և բարեկարգելու մասին:

Այս գրքերի լույս ընծայումը մի նոր փուլ բացեց հայոց հարցի արծարծման համար: Չանդրադառնալով մանրամասներին, նշենք, որ հաջորդ քայլը արեցին հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը(1743-1801) և Մոսկվայի նշանավոր Լազարյան ճեմարանի հիմնադիր Հովհաննես Լազարյանը(1735-1807): Ըստ Լեոյի նրանց ծրագիրը՝ «Հյուսիսային ծրագիրը» վավերականություն չի ստանա այնքան ժամանակ, քանի դեռ հայերը պետություն չեն կազմավորել, բայց և այնպես այդտեղ արտացոլված են այն ժամանակվա հայ գործիչների քաղաքական իդեալները, իրենց հայրենիքի ազատագրման, հայկական հարցի լուծման վերաբերյալ[20]:

Այսպիսով հայ ազատագրական պայքարի գաղափարը չհասավ իր նպատակին մինչև 19-րդ դարի սկզբները: Միայն 1827թ.-ին ռուսական զորքերը գրավեցին Երևանը և Արևելյան Հայաստանի ազատագրումը այլևս փաստ էր: «Անդրկովկասում այլևս հայկական հարց չէր մնում,- նշում է Լեոն՝ նկատի ունենալով մահմեդական տիրապետության լծից Արևելյան Հայաստանի ազատագրումը»[21]:

Լեոն «Հայկական հարցի վավերագրերը» գրքի երկրորդ մասը վերնագրել է «Հայոց հարցը Թուրքիայում», որ բաժանված է հինգ գլխի: Այս գլուխներում Լեոն ըստ ժամանակագրության ներկայացնում է Հայկական հարցի ընթացքը 1829-1914 թվականներին: Ստորև համառոտ ներկայացնում ենք գլուխները առանձին-առանձին:

---

[19] Նույն տեղում, էջ 30:
[20] Նույն տեղում, էջ 35:
[21] Նույն տեղում, էջ 44:

Առաջին գլուխը ընդգրկում է 1829-1878 թվականները: Արևելյան Հայաստանի օրինակով, հայերը հույս ունեին որ նույն ճակատագրին կարժանանա նաև Արևմտյան Հայաստանի գոնե մի մասը: Լեոյի խոսքով «Թուրքիան Պարսկաստան չէր», և հարցը նույն ձևով չէր լուծվի, որովհետև Թուրքիային օժանդակում էր Եվրոպան ընդդեմ Ռուսաստանի: Չնայած ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակին, Ռուսաստանը չկարողացավ տարածքներ վերցնել Թուրքիայից սահմաններում: Այս պատերազմից հետո հայոց հարցը շեշտվեց, առանց որևէ ձևակերպում ստանալու: Միայն 1829թ. Կնքված Ադրիանապոլսի պայմանագրով որոշ չափով օգտվեցին թուրքահայերը. Մոտ 100.000 հոգի գաղթեցին Անդրկովկասի ռուսական հողեր:

«Սրանով իհարկե, հայոց հարցը չէր լուծվում,- գրում է Լեոն, -միջազգային հարաբերությունների մեջ նա դեռ չուներ իր որոշ տեղը իբրև քրիստոնյա մի ժողովրդի հարց: Բայց նրա ճակատագիրը կապվում էր հայ հայրենիքի աշխարհագրական դիրքի միջազգային նշանակության հետ: Այս տեսակետով հայկական բարձրավանդակը ներկայանում էր այնպիսի մի ռազմագիտական վայր, որ Արևմտյան պետությունները և մասնավորապես Անգլիան չէին կարող զիջել Ռուսաստանին կամ թողնել նրա բացառիկ ազդեցության տակ»[22]:

19-րդ դարում հայությունը համակվում է եվրոպական կրթությամբ և գաղափարներով: Գլխավոր պաշտամունքը դառնում է ազգությունը և հայրենիքը, որի ջատագովներից մեկն էր Միքայել Նալբանդյանը (1829-1866): Նա ծանոթանում և մտերմանում է ռուս հեղափոխական գործիչների հետ, որոնք ծրագրում էին սլավոնական ազգերի ազատության և ինքնավարության հարցը, որը պետք է կատարվեր ապստամբությունների միջոցով: Նալբանդյանը այս ծրագրի մեջ ներառում է նաև Հայաստանին: 1860թ. Նալբանդյանը Պոլսում կազմակերպում է մի գաղտնի մարմին, որի ղեկը ստանձնում է «Մեղու» ամսագրի խմբագիր Հարություն Սվաճյանը (1831-1874): Վերոնշյալ ապստաբությունը սկսվում է Զեյթունից 1862թ. Օգոստոսին, սակայն հուլիսին Նալբանդյանն արդեն ձերբակալվել էր՝ Բակունինի (ռուս հեղափոխական գործիչ) հետ հարաբերությունների համար:

Նալբանդյանը ոգևորված էր Բակունինի հուժկու ապստամբական ոգով: Նրան ոգևորել էին Բակունինի այս խոսքերը, թե «առանց քանդելու, առանց կրքի՝ անհնարին և անկարելի է հեղափոխական գործը…, որովհետև հենց այդ քանդման միջոցով է սկզբնավորվում և ծագում նոր

[22] Նույն տեղում, էջ 48:

աշխարհներ»: Հենց այսպիսի քանդողական մտքերով տարված Նալբանդյանին Հերցենը այսպես է բնորոշում. «Ոսկի սեր, անձնվեր, անշահասեր, անձնվեր միամտորեն՝ մինչև սուրբ լինելու աստիճան»[23] :

Լեոյի բնորոշմամբ Զեյթունի ապստաբությունը մնում է իբրև փաստ և նրանց տարած հաղթանակով Զեյթունը դառնում է Հայաստանի ազատության առաջին կոչնակը: Ինչպես նաև Զեյթունն էր, որ առաջին անգամ, հանում էր Եվրոպայի հանրային կարծիքի առջև մի հայ ժողովրդի գոյությունը Թուրքիայում և նրա ըմբոստացումը թուրքական ռեժիմի դեմ: Այստեղ առաջին դիվանագիտական փորձը անհաջող եղավ: Բայց գլխավորն այն էր, որ հայերը սովորում էին համառորեն ծեծել եվրոպական դիպլոմատիկայի դռները՝ բեռնավորված մեծամեծ հույսերով: Զեյթունի դեպքերով առաջին անգամ եվրոպական մամուլի և դիվանագիտության մեջ ձևակերպվում էր մի նոր երևույթ Օսմանյան Արևելքում՝ Հայոց հարցը[24]:

Երկրորդ գլուխը Լեոն սկսում է 1878 թվականով, որը նշանավորվում է Հայկական հարցի արծարծման 2-րդ փուլով: 1878թ. Հունվարի 19-ին Ադրիանապոլսում ստորագրված ռուս-թուրքական զինադադարի պայմանների մեջ Հայկական հարցի մասին խոսք չկար: Կ. Պոլսի հայերը անում էին ամեն ինչ, որպեսզի այս իրավիճակում չմոռացվեր «թուրքահայը իր դարավոր արյունոտ հարցով»[25]:

1878թ. Փետրվարի 19-ին Կ. Պոլսի արվարձան Սան-Ստեֆանոյում կնքվեց ռուս-թուրքական պատերազմի ավարտը բնորոշող նախնական հաշտության պայմանագիր: Սան-Ստեֆանոյի պայմանագրում մտցվեցին առանձին հոդվածներ ու ձևակերպումներ, որոնք վերաբերում էին Հայաստանին ու հայերին: Դրանք էին 16-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածները:

Լեոն ավելի մանրամասն խոսում է 16-րդ հոդվածի մասին, որը ամբողջովին վերաբերում էր թուրքահայության հարցին: «Բարձր դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցվող բարենորոգումներ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»[26]:

Հայերը մտածում էին, որ 16-րդ հոդվածով, չնայած նրան, որ այն միայն անորոշ խոստումներ էր իրենից ենթադրում, իրենց տրվելու է ինքնավարություն: «Իրականություն,- գրում է

[23] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, էջ 29
[24] Նույն տեղում, էջ 30-32
[25] Լեո, Հայկական հարցի վավերագրերը, (վերահրատարակություն), էջ 51
[26] Նույն տեղում, էջ 59:

Լեոն,- այսպիսի Թուրքահայաստան կա, այսպիսի հայ ժողովուրդ կա: Ճար գտնված է այդ անբախտ ժողովրդի համար, - ասում են մեզ, - և այդ ճարը Սան Ստեֆանոն է՝ իր 16-րդ հոդվածով, որը դառնում է ազգային փրկության, փառք ու պարծանքի մի կոթող: Նա թողնում է հայ իրականության վրա անջնջելի, խոր ազդեցություն, նա մի ամբողջ դարագլուխ է դառնում կյանքի մեջ: Հայոց հարցը դրված էր պաշտոնական հողի վրա, թուրքահայն այլևս անտեր չէր»[27]:

Հարկ ենք համարում նշել, որ Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածի հետ կապված Լեոն հետագայում փոխում է իր տեսակետը, ասելով, որ հայ ժողովուրդը Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածով ձեռք չէր բերում իր համար ոչինչ դրական, անվիճելի միջազգային իրավունք… այն մի ոճիր էր, որ բնաջնջվող սրի տակ էր դնում ամբողջ հայ ժողովրդի կոկորդը… ուրիշ անուն, բացի մեծագույն չարիքից ու ոճիրից, չի կարելի տալ հայերի ստացած 16-րդ հոդվածին[28]:

1878թ. Հունիսի 1(13)-ից հուլիսի 1(13)-ը կայացավ միջազգային կոնգրես, որը հրավիրվել էր Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման համար Բեռլինում: Մկրտիչ Խրիմյանը մասնակցում է Բեռլինի վեհաժողովին որպես Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ներկայացուցիչ: Նրա գլխավորությամբ կազմվել էր պատվիրակություն, որտեղ մեծ դերակատարում ուներ Մինաս Չերազը: Այս առիթով Լեոն տալիս է հետևյալ նկարագիրը. «Խրիմյանը, անլեզու մուրացկան էր, բայց նրա համար ճարտար և վազվզուկ լեզվի պաշտոն կատարում էր ժամանակի ազգասեր, ինտելիգենցիայի կարկառուն դեմքը – Մինաս Չերազ, այժմ «հայոց հարցի վաստակավոր գործիչ» տիտղոսով զարֆարված մի ծերունի»[29]:

Բեռլինում վերանայվեցին Սան Ստեֆանոյի պայմանագրի բոլոր դրույթներն ու կետերը, այդ թվում 16-րդ հոդվածը, որը վերաբերում էր Հայկական հարցին: Սակայն հարկ է նշել, որ Բեռլինում առաջնորդի դերը իրականացնում էր Անգլիան, «որը Բեռլին էր եկել Ռուսաստանին ջախջախելու համար»[30]: Ըստ Էության, Ռուսաստանը, հաղթած լինելով պատերազմի դաշտում՝ ծանր պարտություններ է կրում դիվանագիտական ասպարեզում: Սակայն ավելի վատթար իրավիճակում գտնվում էր հայկական պատվիրակությունը, որին անգամ իրավունք չտվեցին մասնակցել կոնգրեսի աշխատանքներին: Լեոն այս կամակցությամբ հայերին բնութագրում է, որպես խեղճ ու միամիտ ազգ, որոնք քաղաքականության ասպարեզում անում են իրենց առաջին

[27] Լեո, Անցյալից, (վերահրատակություն), էջ 46:
[28] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, էջ 78:
[29] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, էջ 85:
[30] Լեո, Անցյալից, (վերահրատարակություն), էջ 48:

քայլերը: Նրանք գուցե և շատ բան գիտեին, բայց երբեք չիմացան ամենագլխավորը. Որ եվրոպական դիվանագիտությունը մարդասերների հրամանի տակ չի գտնվում, այլ բորսայի, կապիտալի, բանկերի հրամանի տակ[31]:

Անգլիայի թելադրանքով Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը դառնում է Բեռլինի 61-րդ հոդվածը: 61-րդ հոդվածով կոնգրեսը որոշեց «հայաբնակ մարզերում» բարենորոգումները անցկացնել այնտեղից ռուսական բանակի դուրս գալուց հետո: Բացի այդ, 61-րդ հոդվածում Հայաստան անվանումը փոխարինվում էր «հայաբնակ մարզեր» անորոշ արտահայտությամբ:

Հայերը Բեռլինի կոնգրեսից վերադարձան ձեռնունայն առանց բաղձալի ինքնավարությանը հասնելու, և այդ փաստի հետ կապված Լեոն ունի դիպուկ նկարագրություն. «Հայ պատվիրակությունը, կուշտ աղոթելուց հետո, 16-րդ հոդվածի այս կարկատանն էր իր հետ տանում Բեռլինից Կ. Պոլիս»[32]:

Երրորդ գլխում Լեոն անդրադառնում է հայկական հարցի քննարկումներին 1880-1895թթ. Ընթացքում: Նա ներկայացնում է, որ մինչև 1914թ. Եվրոպական դիվանագիտությունը երեք անգամ է լուրջ քայլեր արել Հայկական հարցի լուծման համար Բեռլինի վեհաժողովից հետո: Առաջինը կապված էր Անգլիայի անվան հետ:

Բեռլինի վեհաժողովից հետո, հայության մոտ ստեղծվել էր հիասթափության մթնոլորտ, բայց սա շատ կարճ տևեց, քանի որ 1880 թ. Անգլիայում պառլամենտական ընտրությունների ժամանակ հաղթեց ազատամիտների կուսակցությունը Գլադստոնի գլխավորությամբ: Գլադստոնը նոր հույս արթնացրեց հայերի մեջ, կապված հայկական հարցի լուծման հետ: Գլադստոնը,- գրում է Լեոն,- համարվում էր «տանջվածների պաշտպան>> ու ազգերի եղբայրության հզոր ախոյան, սուլթանական Թուրքիայի ճիրաններում գալարվող բազմաչարչար հայ ժողովրդի համար: Գլադստոնին է պատկանում <<ծառայել Հայստանին՝ նշանակում է ծառայել մարդկությանը» թևավոր արտահայտությունը: Սակայն, ինչպես ցույց է տալիս դեպքերի հետագա ընթացքը, վերջինս հայերին հիշել և հայերին օգտագործել է որպես պահպանողականների դեմ քաղաքական պայքարի միջոց, իսկ իշխանության գլուխ անցնելուց հետո շարունակել է նույն ծավալապաշտական քաղաքականությունը: Գլադստոնի ելույթները այնպես են ձևակերպված, որ իբր թե Արևելյան հարցում անգլիական կառավարությունը ղեկավարվում է բացառապես

[31] Նույն տեղում:
[32] Նույն տեղում, էջ 49:

հումանիզի և հայ ժողովրդին կարեկցելու սկբունքով: Մինչդեռ իրականումը Գլադստոնի ելույթները հայերին ոչ մի օգնություն չէին խոստանում[33]:

1920-ական թթ. Լեոն Գլադստոնի քաղաքականությունը որակում է «բացարձակ թշնամական և աղետաբեր հայ ժողովրդի համար»[34]:

1880-ական թթ. Հայոց հարցը Թուրքիայի սահմանների մեջ ստանում է քաղաքական ահավոր պայքարի ձև: Հայկական շարժումը ընդունում է հեղափոխական կերպարանք, որը ավելի ուժեղ արտահայտություն սկսում է ստանալ 1880-ական թթ. Վերջից, երբ կազմավորվում են Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները[35]:

Փորձելով ներկայացնել 1880-90ական թթ. Հայկական հարցի հետ կապված խնդիրները հարկ ենք համարում զուգահեռաբար կարևոր մեջբերումներ անել Լեոյի «Անցյալից» գրքից: Այս թվականների հետ է կապված վերոնշյալ գրքի առաջին գլուխը, որտեղ Լեոն ներկայացնում է, որ 1888-ին վերջնականապես տրվում է հայոց հարցի ձևակերպումը՝ այն է հայդուկային կռիվ և եվրոպայի պաշտամունք: Հայդուկային կռիվը համարելով բահերով կռիվ, Լեոն նշում է, որ դրանց կազմակերպողներն ու առաջնորդողները եղել են Ժնևի հայ ուսանողները՝ ապագա Հնչակյան կուսակցության հիմնադիրները: Չանդրադառնալով մանրամասներին նշենք, որ Հնչակյանները կարծում էին, որ կկարողանան գրավել Եվրոպայի ուշադրությունը, եթե ապստամբություններ կազմակերպեն Եվրոպային մոտ վայրերում, որին ի պատասխան Համիդը կոտորածներով էր սաստելու հեղափոխականներին: Սա շատ ծանր ու մղձավանջային հանգամանք էր, քանի որ հայ ժողովրդի մի մասի հարցը փորձում էին լուծել մյուս մասի արյան գնով: Դրվում էր թուրքահայ ժողովրդի մահվան դատավճիռը: «Այսպիսով դանակը դրվում էր հայ ժողովրդի կոկորդին»,- գրում էր Լեոն[36]:

Լեոն իր այս աշխատության մեջ չի նշանավորում Գում-Գափուի դեպքերը, այլ շեշտում է դրանից հետո ստեղծված իրադրությունը, որը իրոք անմխիթար էր: Խոսելով 1892թ. Մասին՝ Հեղինակը նշում է, որ այս տարին մի քանի կարևոր իրադարձություններով էր հայտնի: Առաջինը եղավ Մկրտիչ Խրիմյանի կաթողիկոս ընտրվելու փաստը, իսկ երկրորդ ու թերևս կարևոր փաստերից էր Գրիգոր Արծրունու մահը: Նշենք, որ Գրիգոր Արծրունին (1845-1892) եղել է հայտնի

[33] Ն. Սարուխանյան,նշվ. աշխ., էջ 200-202:
[34] Մանրամասն տես՝ Լեո, Անցյալից, (վերահրատարակություն), էջ 55-60:
[35] Լեո, Հայկական հարցի վավերագրերը, (վերահրատարակություն), էջ 139:
[36] Նույն տեղում, էջ 77-93:

հրապարակախոս, քննադատ, գրական-հասարակական գործիչ: Նրա տեսակետները ազդեցություն են ունեցել Լեոյի՝ Արևելյան Հայաստանում ռուսական տիրապետության հաստատման արդյունքների գնահատման հետ կապված հայացքներում: Լեոն ունի աշխատությունը նվիրված Գրիգոր Արծրունուն, որտեղ գրում է, որ Կովկասը Գրիգոր Արծրունու առջև ներկայանում է մի այսպիսի երևույթ: Ռուսաց տիրապետությունը հաստատել էրն քաղաքական խաղաղություն, երկիրն այլևս պատերազմի դաշտ չէր…և այժմ ազգերի պետք է ձգտեին ապրել քաղաքակիրթ ազգերի կյանքով…[37]:

Հենց Արծրունու թաղման ժամանակ էլ Լեոն ծանոթանում է Քրիստափոր Միքայելյանի (հայ հասարակական-քաղաքական գործիչ, Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադիրներից, 1859-1905) հետ[38]:

«Մեր Քրիստափորը,- գրում է Լեոն,- համեստության ու պարզության մի ծայրագույն օրինակ էր…: Նա չափազանց խոնարհ էր, բայց նա մի շատ փայլուն ապացույց էր, որ այդ հեզ ու մեղմ հատկությունների տակ էլ կարող է անսասան համոզմունք, անհողդողդ վճռականություն, տոկուն հաստատակամություն ամբարված լինել»[39]:

Այս տարիների ընթացքում խիստ սրվել էր թուրքական կառավարության ու հայ ժողովրդի հարաբերությունները, ինչը հանգեցնում է 1894թ. Սասունի ապստամբությանը, որը ցնցում է առաջացնում Եվրոպայում:

Անդրադառնալով «Հայկական հարցի վավերագրերը» գրքի **չորրորդ գլխին,** նշենք, որ այս դեպքերից հետո պետությունները երկրորդ անգամ իրենց ձեռքը «վերցրեցին» հայկական հարցը: Այստեղ վեց պետություններից միայն երեքն էին հայ դատի պաշտպան հանդիսանում՝ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, որոնք մշակում էին բարենորոգումների նոր ծրագիր (Մայիսյան բարենորոգումների ծրագիր, 1895թ. Մայիս 11):

Ամփոփելով այս գլխում հայկական հարցի քննարկումները՝ Լեոն շեշտադրում է եվրոպական դիվանագիտության կատաղի պայքարը հայկական հարցում մի կողմից Անգլիայի, որի ազդեցությունը այդ տարիներին գնալով մեծանում էր հայկական շրջանների վրա, մյուս

---

[37] Լեո, Գրիգոր Արծրունի, հ. Բ, էջ 248-249:
[38] Լեո, Հայկական հարցի վավերագրերը, էջ 97-110:
[39] Լեո, Քրիստափոր Միքայելյանի հիշատակին, Կ. Պոլիս, 1909, էջ 65,67:

կողմից՝ ռուս-ֆրանսիական ալյանսի միջև, որը փորձում էր զսպել Անգլիայի ակտիվությունը և իր հովանավորության տակ վերցնել Թուրքիան:

Այս շրջանում Թուրքիայում տեղի էին ունենում քաղաքական խմորումներ, որոնց Լեոն անդրադարձել է իր «Անցյալից» գրքի «Հաղթանակ Թուրքիայում գլխում»[40]: Համիդյան վարչակարգի դեմ էին դուրս եկել երիտասարդ թուրքերը՝ երիտթուրքերը, իրենց «Առաջադիմության և միության կուսակցությամբ» (Իթթիհատ վե թերաքե): 1907թ. Տեղի է Փարիզի ժողովը, որին մասնակցում էին նաև դաշնակցականները, և կարողանում են երիտթուրքերից խոստում կորզել հայկական հարցի հետ կապված: Նրանք մտերմանում են երիտթուրքերի հետ, և նրանց հետ բողոքի ցույցեր էին կազմակերպում: Սակայն երիտթուրքերը 1908թ.կատարեցին հեղաշրջում և գահընկեց արեցին Աբդուլ Համիդ 2-րդ-ին: Անցնելով իշխանության գլուխ՝ երիտթուրքերը վերջնականապես հրաժարվեցին այն խոստումներից, որ Փարիզի ժողովի ժամանակ տվել էին ազգային փոքրամասնություններին:

«Մտերմությունն, այո,- գրում է Լեոն,- մեծ էր և սքանչելի: Եվ ով կարող էր մտքով անգամ անցկացնել, թե ամենաշատը մի տարուց հետո քամին ուրիշ տեղից պիտի փչի և մեր դաշնակցականներին քշի տանի բոլորովին հակառակ ուղղությամբ…»[41]:

«Հայկական հարցի վավերագրերը» գրքի թերևս վերջին՝ **հինգերորդ գլուխը** Լեոն սկսում է 1912 թվականի Բալկանյան պատերազմի նկարագրությամբ: Սրանով կարևորվում էր հայկական հարցի վերաբացումը, որտեղ ռուսական քաղաքականությունը իր պետական շահերի տեսակետից անհրաժեշտ էր համարում հարցը լուծել հայերին ցանկալի եղանակով[42]:

Լեոն, նշում է, որ այդ ժամանակ ռուսական և հայկական շահերի մեջ համերաշխություն կա, նրանք պետք է այն էլ հասկանային, որ թուրքահայության պաշտպանության լավագույն եղանակը գոյություն ունեցող պայմանների մեջ հենց այն էր, որ առաջարկում էր ռուսաց կառավարությունը, այսինքն ՝ առանձնակի միջամտության եղանակը: «Բայց մենք չէինք հասունացած մինչև մեր ժողովրդի կենսական պահանջները հասկանալը: Չէինք ուզում որ ռուսական ցարիզմը մեզ կլանի, ուզում էինք ինքնավար լինել, գուցե և ՝ անկախ, և դրա համար հարկավոր էր, որ մեր հարցը լիներ միջազգային, և նրա լուծողը լիներ… Եվրոպան: Քառասուն տարուց մոտ էր, որ ունենք 61-րդ

[40] Լեո, Անցյալից, էջ-204-229:
[41] Նույն տեղում, էջ 223:
[42] Լեո, Հայկական հարցի վավերագրերը, (վերահրատարակություն), էջ 208:

հոդվածը, և մազի չափ չէինք խրատվել. Այսօր էլ նույնն էինք, ինչ եղանք Բեռլինի դաշնագրի թարմ տպավորության տակ»,- ահա այսպիսի քամահրական վերաբերմունք ուներ Լեոն այս ժամանակ[43]:

Այս հարցի հետ կապված նույնպես Լեոն իրեն բնորոշ քայլ կատարեց, և խորհրդային շրջանում գրած իր աշխատության մեջ խիստ հակասական կարծիք հայտնեց, գրելով. «Հայերը պետք է ընդունեին թուրք-գերմանական կողմնորոշում, որովհետև Բալկանյան պատերազմում թուլացած Թուրքիան պատրաստակամություն էր հայտնում համաձայնության գալ հայերի հետ առանց միջնորդների, բացի այդ լինել Թուրքիայի հետ, նշանակում էր, լինել Գերմանիայի հետ, որը վարում էր թուրքահայերի դրությունը բարվոքելու քաղաքականություն…»[44] : Սարուխանյանի բնորոշմամբ Լեոյի այս կեցվածքը պատմական իրականության խեղաթյուրում էր, և իր իսկ հեղինակած «Հայոց հարցի վավերագրերի» նենգափոխում[45]:

Լեոն «Անցյալից» աշխատության չորրորդ գլխում՝ «Սկիզբն անկման», անդրադառնում է 1912-1914 թթ. Դեպքերին մանրամասնորեն, որտեղ քննադատորեն է վերաբերվում հայերի որդեգրած «պահանջատեր» կեցվածքին և այս իրադարձությունների հետ կապված գրում է.

-Աչքը լույս հայ ժողովրդի… 1915-ի բնաջնջման հաստատ հիմունքներն էին դրվում[46]:

---

[43] Լեո, Անցյալից, էջ 239:
[44] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, էջ 71:
[45] Սարուխանյան Ն., Խորհրդահայ պատմագիտությունը 1920-30-ական թթ., էջ 213;
[46] Լեո, Անցյալից, էջ 256:

Եզրակացություն

Ամփոփելով հետազոտական աշխատանքը, նշեմ, որ փորձեցի հնարավորինս ներկայացնել և վերլուծել Լեոյի պատմագիտական աշխատությունները՝ մասնավորապես հայկական հարցին վերաբերող գործերը:

Ուսումնասիրության ընթացքում հանգեցի այն կարծքիքին, որ ճիշտ են պատմաբանների այն տեսակետները, որ Լեոյի հայացքները մեկը մյուսն հակասում են, որտեղ մեծ դեր ունի պատմական ժամանակաշրջանը:

1. Սրա վառ օրինակն է «Հայկական հարցի վավերագրերը», որտեղ Լեոն հայկական հարցը կարևորում է, և ներկայացնում է որպես գոյության հարց, սակայն չմոռանանք, որ նա եկել է այս համոզմանը, քանի որ աշխատանքը գրելու ժամանակաշրջանը համընկել է երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության հետ, և հետևաբար այն իր ազդեցությունն է ունեցել Լեոյի այսպիսի ծայրահեղ որակավորում տալու վրա: Սակայն մեկ այլ տեղ՝ «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ, Լեոն հակասում է ինքն իրեն, և նշում է, որ հայկական հարցն առաջացել է Զեյթունի ապստամբության ժամանակ: Իսկ «Անցյալից» հուշագրությունում գրում է, որ հայկական հարցը առաջացել է 1877-1878թթ. Ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, նշենք, որ Լեոն վերջին երկու աշխատությունները գրել է խորհրդային ժամանակաշրջանում: Ահա, այսպիսի ակնհայտ ազդեցություն է ունենում պատմական ժամանակաշրջանը Լեոնի տեսակետների կտրուկ փոփոխման վրա:

2. Լեոյի տեսակետների փոփոխության ակներև տեսակետներից է Անգլիական քաղաքականության, մասնավորապես Գլադստոնի հետ կապված կարծիքները, եթե «Գլադստոն» աշխատության մեջ Լեոն վերջինիս ներկայացնում է որպես «մեծ հայասեր և հայկական հարցի լուծման ջատագով», ապա «Անցյալից» աշխատության մեջ ասում է, որ դա կեղծ էր, մոլորություն էր, և իրենից ենթադրում էր անգլիական նվաճողական քաղաքականության նախապատրաստական քարոզ:

3. Մինչխորհրդային շրջանի իր աշխատություններում Լեոն շատ բարձր էև գնահատում հայերի ռուսական կողմորոշումը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Մտածում էր, որ Ռուսաստանի հովանավորության տակ մտնելով հայ ժողովուրդը այլևս ոչ մի հոգս չի կարող ունենալ: Սակայն «Անցյալից» և «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը»

աշխատություններում Լեոն կտրուկ փոխում է իր տեսակետը, և բացասական վերաբերմունք է հանդես բերում հայերի ռուսական կողմնորոշման հանդեպ և անգամ մեղադրում էր ցարիզմի ջատագովներին:

4. Չորրորդ ակնհայտ փոփոխությունը կապված է Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածի նշանակության ընկալմանը: Հեղինակը «Անցյալից» աշխատության մեջ այս հոդվածը համարում է փրկություն, հույս հայերի համար, և նշում է, որ հայերը այլևս անտեր չեն: Այստեղ ակնհայտ երևում է նրա դրական վերաբերմունքը այս հոդվածի հետ կապված: Իսկ ահա «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբնությունը աշխատության» մեջ ասում է, որ այս հոդվածը պատիժներից մեծագույնն էր և դրանք անորոշ խոստումներ էին:

Թեև Լեոն ներկայացնում էր բարդ և հակասական տեսակետներ, սակայն նրա աշխատությունների հիմնական նպատակը հայկական հարցի լուծման և հայ ազատագրական պայքարի ուղիների որոնումն էր անցհալի էջերում: Եվ այսքանով հանդերձ պետք է փաստենք, որ անգնահատելի է Լեոյի թողած գրական ժառանգությունը: Լեոն եղել է հայագիտության այն եզակիներից մեկը, ով հայոց պատմությունը շարադրել է հնագույն ժամանակներից՝ հասցնելով մինչև 20-րդ դարի 2-րդ տասնամյակ:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ

1. Լեո, Գրիգոր Արծրունի, հ. Բ, Թիֆլիս, 1903:
2. Լեո, Հայկական հարց, հ. Ա, Թիֆլիս, 1906:
3. Լեո, Քրիստափոր Միքայելյանի հիշատակին, Կ. Պոլիս, 1909:
4. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ.Ա, Փարիզ, 1934:
5. Լեո,Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ.Բ, Փարիզ, 1936:
6. Լեո, Անցյալից, (վերահրատարակություն), Երևան, 2009:
7. Լեո, Հայկական հարցի վավերագրերը, (վերահրատակություն), Երևան, 2014:
8. Սարուխանյան Ն., Խորհրդահայ պատմագիտությունը 1920-30-ական թթ. , Երևան, 2016: